ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 դեկտեմբեր, 2021 թվականի N 25-Լ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՐԴԻ
ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով և հաշվի առնելով Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատանքներն առավել արդյունավետ կազմակերպելու անհրաժեշտությունը՝ ո ր ո շ ու մ ե մ.

1. Հանրային հեռարձակողի խորհրդի նախագահի նախաձեռնությամբ 2021 թվականի դեկտեմբերի 23-ին և ժամը 12:00-ին, գումարել Հանրային հեռարձակողի խորհրդի նիստ, Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Ալեք Մանուկյան 5 հասցեում գտնվող իր գործունեության վայրում:

2. Սույն որոշման 1-ին կետով նախատեսված՝ Հանրային հեռարձակողի խորհրդի նիստը գումարել հետևյալ օրակարգով.

1. «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերության լսողական ծրագրերի՝ 2022 թվականի հունվար-փետրվար ամիսների ընթացքում հեռարձակման համար նախատեսված հաղորդացանցերը հաստատելու մասին հարցը:
2. «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերության 2022 թվականի լսողական ծրագրերի թիվը և լսողական հաղորդումների ընդհանուր ծավալը սահմանելու մասին հարցը:
3. «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերության 2022 թվականի լսողական ծրագրերի կառուցվածքը և դրանց առանձին բաժինների համամասնությունները հաստատելու մասին հարցը:
4. «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերության 2022 թվականի տարեկան եկամտի աղբյուրների և ձեռքբերումների, եկամուտների և ծախսերի և դրամական հոսքերի նախահաշիվները հաստատելու մասին հարցը:
5. «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերության 2022 թվականի վարչակազմակերպական կառուցվածքը և հաստիքացուցակը հաստատելու մասին հարցը:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ա. ՇԻՐԻՆՅԱՆ

21 դեկտեմբեր, 2021 թվական
ք. Երևան